

BACCALAURÉAT GÉNÉRAL

SÉRIE LITTÉRAIRE : LANGUE VIVANTE 1

coefficient 4

SÉRIE ÉCONOMIQUE ET SOCIALE - SÉRIE SCIENTIFIQUE : LANGUE VIVANTE 1

coefficient 3

Épreuve d'arménien occidental

Durée de l'épreuve : 3 heures

L'usage des calculatrices et des dictionnaires est interdit.

Les candidats indiqueront en haut de leur copie s'ils composent en arménien occidental ou oriental.

Deux textes distincts sont présentés pour les deux variantes.

Texte en arménien occidental :

Գիրքը

Ըստ Անահիտ Սահյանի

Ես որոշած էի ճարտարագետ¹ դառնալ: Գրելը ձգած, ես համալսարանի առաջին տարին ամբողջովին տարուած² էի իմ դասերովս: Մեծ հաճությով կը սորվէի: Բայց եթէ ձեռքս գեղարուեստական գիրք³ մը, վէպ մը անցնէր, ամեն բան մոռցած վրան կ'իյնայի⁴, մէկ շունչով կը կարդայի:

5 Օր մը դասամիջոցին դասընկերուհիներուս մէկուն ձեռքը գիրք մը տեսայ ... վէպ ... Առաջին էջի վրայ գրուած էր «Յարութիւն»⁵, ծանօթ անուն էր:

«Օտտ կը խնդրեմ, տուր, տանիմ, կարդամ,» ըսի:

Չմերժեց:

10 Հին դասագիրքի մը մէջ կարդացեր էի Ղազարոս Աղայեանի⁶ «Յարութիւն եւ Մանուէլ» վէպին հատուածները⁷: Կարծեցի անոր շարունակութիւնն է ձեռքս ինկած այս «Յարութիւնը»:

Տարի տուն, սկսայ կարդալ ... յափշտակուեցայ⁸ գրքին մէջ կատարուող դէպքերով, մոռցայ Յարութիւնն ու Մանուէլը:

Գիրքը վերջանալէն յետոյ նորէն նայեցայ վերնագրին ու հասկցայ որ ոտքս հայ գրականութենէն դուրս դրած էի:

¹ ճարտարագետ - ingénieur

² տարուիլ - être pris, être emporté

³ գեղարուեստական գիրք - oeuvre littéraire

⁴ բանի մը վրայ իյնալ - se précipiter sur quelque chose

⁵ « Յարութիւն » - « La Résurrection » (Il s'agit d'une oeuvre de Léon Tolstoï)

⁶ Ղազարոս Աղայեան - Ghazaros Aghayan (écrivain, 1840 - 1911)

⁷ հատուած - extrait

⁸ յափշտակուիլ - être emporté, être séduit

- 15 Գիրքը վերադարձուցի ընկերուհիիս եւ խնդրեցի ուրիշ մը, եթէ ունի:
 « Ես ասիկա գրադարանէն առած եմ », ըսաւ ան:
 Ընկերուհիս բացատրեց ինծի այդ գրադարանին տեղը:
 Յաջորդ օրը գացի եւ գտայ այդ գրադարանը: Գրքեր լանձնողը ծանօթ երիտասարդ մըն էր: Ան խոստացաւ ինծի լաւ գրքեր տալ կարդալու, այն պայմանով, որ ընթերցասրահին⁹ մէջ
 20 կարդամ: «Հազուագիւտ¹⁰ գրքեր», ըսաւ, «տուն տանիլ արտօնուած չէ:»
 Անկէ յետոյ ես գրադարանի ամենօրեայ այցելուն դարձայ: Դասերէն վերջ, ազատ ժամերուն կը վազէի գրադարան: Սկսայ կարդալ թարգմանութիւններ՝ Թէքստիլ, Վիքթօր Հիկօ, Մօփասան, Թիլլեր, Տիքէնս ... համաշխարհային գրականութեան զանազան գոհարներ:
 Ամէն գրքէ վերջ ես ինքս, իմ կարծիքովս, անճանաչելիօրէն կը փոխուէի, հաճելի ու
 25 զարմանալի էր, որ ոչ մէկը չէր նկատեր այդ: Իմ երեւակայութեամբս, դարձայ հեքեաթի մոխրոտի¹¹ պէս բան մը, որուն շրջապատին¹² մարդիկը միամտաբար կը համարէին¹³ զինք աննշան¹⁴, հասարակ աղջիկ, միճոյեռ ան շուտով պիտի կենար իրենց առջեւ իշխանուհի¹⁵ պէս շքեղ ... ու գեղեցիկ:

Exercices

I. Compréhension écrite

1 - Traduisez en français, de la ligne n° 12 « *Տարի տուն* » jusqu'à la ligne n° 22, « *արտօնուած չէ*: ».

2 - Répondez aux questions suivantes par Oui ou par Non :

- Պատմողը «Յարութիւն եւ Մանուէլ» վէպը չէր կարդացած:
- Դասերէն բացակայելով կ'երթար գրադարան:
- Ամէն մէկ գիրքէն յետոյ զարմանալիօրէն կը փոխուէր ան:
- Գրադարանը գիրք լանձնողը իրեն ծանօթ երիտասարդ մըն էր:
- Միայն Թէքստիլն ու Վիքթօր Հիկօն կը հետաքրքրէին զայն:

⁹ ընթերցասրահ - salle de lecture

¹⁰ հազուագիւտ - rare

¹¹ մոխրոտ - Cendrillon (Personnage de conte de fées de Charles Perrault. Cette jeune fille, persécutée par sa marâtre, triomphe de l'adversité grâce à sa beauté et épouse le fils du roi.)

¹² շրջապատ - entourage

¹³ համարել - considérer

¹⁴ աննշան - insignifiant, sans importance

¹⁵ իշխանուհի - princesse

3 - Répondez brièvement aux questions suivantes :

- a) Գրուածքին առաջին չորս տողերուն մէջ ինչի՞ մասին կը խօսի պատմողը, ի՞նչ կ'ուզէ դրսեւորել (mettre en évidence) յատկապէս:
- b) «Յարութիւն» վէպը կարդալէն վերջ, ի՞նչ արթնցաւ իր մէջ ի՞նչ ուզեց ընել յետոյ:
- c) Գրադարանի «հազուագիտ գրքերը տուն տանիլ արտօնուած չէ»: Ինչո՞ւ: Ի՞նչ պատճառներ կան արգիլելու:
- d) Պատմողը ինքզինքը կը նմանցնէ հեքեաթի մոխրոտին: ինչի՞ մէջ կը գտնէ այդ նմանութիւնը:

II. Expression personnelle

Ինչո՞վ կը զբաղիք ձեր ազատ ժամերուն: Գիրք կամ թերթ կարդալը ձեզ կը հետաքրքրէ՞:
Իսկ հայերէն գիրք եւ թերթ առիթ կ'ունենաք կարդալու: Գրեցէք այդ մասին: